

ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Ականավոր պատմաբան, պատմական դիսուլթոլոգների գոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «Պատմա-լրատվական հանդեսի» գլխավոր խմբագիր Վարդգես Ալեքսանի Միքայելյանի ամբողջ գիտակցական կյանքը հայրենիքին և իրեն ծնունդ աված ժողովրդին որդիական անկեղծ



նվիրվածությամբ անմնացորդ ծառայելու նախանձելի օրինակ է: Ակադեմիկոս Վ. Միքայելյանի բնավորության և խստնվածքի ստանձնահասակությունը չըջապատին իր կուռ տրամաբանությունը և կենսահորդ խանգավածությամբ գործի մղելն է. ճշմարտությունը ծառայելու ավյունով վարակելը: Եվ այդ բոլորի պսակն է գուշտ մարդկային անմիջականությունը, որը մեծապես ծանրակշիռ է գարձնում նրա խոսքը: Յուրաքանչյուր ոք, ով հնարավորություն է ունեցել մոտիկից շփվելու Վարդգես Միքայելյանի հետ, խորապես զգացել է նրա ոչ ոքիչ ազդեցությունը և անկեղծ նվիրվածությամբ կապվել է նրան:

Դժվարին, բայց նպաստակալաց է եղել ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի կյանքի ուղին: Նա ծնվել է 1924 թ. դեկտեմբերի 5-ին ՀԽՍՀ Աշոցքի շրջանի Ղաղանջի գյուղում: 1941 թ. միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1941-1942 թթ. ուսումնական տարում աշխատել է որպես ուսուցիչ Աշոցքի շրջանի Քեֆլի և Դուռաղբյուր գյուղերում: Բայց արդեն ընթանում էր 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմը, ուստի և Վ. Միքայելյանն էլ զորակոչվում է խորհրդային բանակ, իր մասնակցությունը բերում պատերազմին կատարելով իր սլարաքը հայրենիքի հանգեպ: Նա Հայրենական պատերազմի հաշմանդամ է:

Զորացրվելուց անմիջապես հետո, 1947 թ., Վարդգես Միքայելյանն ընդունվում է Երևանի պետական համալսարանի նորաբաց միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: Կարճատև գոյություն ունեցած և ընդամենը չորս տարի շրջանավարտներ աված հիշյալ ֆակուլտետը առանձնահատուկ երևույթ եղավ խորհրդային Հայաստանի կյանքում: Միջպագային հարաբերությունների ֆակուլտետն իր ծոցում սնուցեց և հայրեն-

յադ ծառայութեանն ընծայեց գիտնականների, պետական, կուսակցական ու հասարակական գործիչների մի փայլուն փաղանգ, որի սուղին շարքերում է վաստակաշատ պատմաբան Վարդգես Միքայելյանը: 1952 թ. նա համալսարանն ավարտեց գերազանցութեան դիպլոմով և նույն թվականին էլ ընգունվեց Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան: 1955 թ. «Գյուղացիութեան գրութունը և գյուղացիական ելույթները Հայաստանում 1918–1920 թթ.» թեմայով թեկնածուական ատենախոսութիւնը պաշտպանելուց և պատմական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճան ստանալուց հետո սկսվում է Վ. Միքայելյանի գիտական, դիտախմբագրական և կազմակերպական նպատակասլաց բազմաբնույթ դործունեութիւնը: 1955–1959 թթ. «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրութիւնում աշխատելուց հետո, Վ. Միքայելյանը գիտական աշխատանքի է անցնում ՀՀ ԳԱ պատմութեան ինստիտուտում:

1950-ական թվականների կեսերին Ատալինի անձի պաշտամունքի քննադատութիւնը և ԽՍՀՄ-ում տեղ գտած որոշակի ազատականացումը հնարավորութիւն ընձեռեցին, որպեսզի ՀՀ ԳԱ-ն դառնա հայագիտութեան հիմնահարցերի առաջագեծ և ճանաչված կենտրոն իր համապատասխան ինստիտուտներով: Այդ հիմնահարցերի թվում առաջնահերթ կարևորութիւն էր ներկայացնում նաև մինչ այդ խորհրդային հայ պատմագրութեան կողմից աչքաթող արված, ավելի ճիշտ, արդելքի տակ գտնվող, հայկական մեծածիփ գաղութների պատմութեան ուսումնասիրութիւնը: 1960 թ. Վ. Միքայելյանը ձեռնամուխ եղավ միջնադարի հայկական խոշորագույն գաղթաշխարհի՝ Ղրիմի կամ Armenia maritima-ի (Սուլային Հայաստանի) գաղթաշխարհների ավելի քան վեցհարյուրամյա պատմութեան ուսումնասիրութեանը՝ միաժամանակ մի քանի պատմաբանների հետ (Վ. Ոսկանյան, Վ. Բարխուդարյան, Ս. Հովնանյան և ուրիշներ) մշակելով հայկական գաղութների պատմութեան համակողմանի հետազոտման հիմնական դրույթները:

Արգեն 1964 թ. լույս տեսավ Վ. Միքայելյանի «Ղրիմի հայկական գաղութի պատմութիւն» աշխատութեան առաջին գիրքը, որն ավարտվում էր 1779 թ. ուսսական կառավարութեան կողմից ղրիմահայերի տեղահանութեամբ, ղրիմահայ գաղութի ժամանակավոր մարումով և Դոն գետի ափին նոր նախընկանի հայկական գաղութի հիմնադրմամբ: Նվիրված լինելով Ղրիմի հայկական միջնադարյան գաղութի պատմութեան վերհանմանը և լուսաբանմանը՝ վերոհիշյալ մենագրութիւնը երևան հանեց նաև հեղինակի պատմութեան և պատմական երևույթների իմացութեան հիրավի լայն շրջանակները: Մենագրութեան մեջ ամենայն խորութեամբ և մանրակրկիտ լուսաբանված են հայ-իտալական, հայ-լեհական, հայ-ուկրաինական և հայ-ուսսական դարավոր հարաբերութիւնների հիմնահարցերը խնդրո առարկա ժամանակաշրջանի վերաբերյալ: Հիմնավորապես գիտական այդ աշխատութիւնը 1965 թ. Վ. Միքայելյանը պաշտպանեց իբրև դոկտորական ատենախոսութիւն և ստացավ պատմական գիտութիւնների դոկտորի գիտական աստիճան:

Շարունակելով աշխատանքը Ղրիմի հայոց պատմութեան վրա, որոնք մնացել էին Ղրիմում հայերի տեղահանութիւնից հետո, Վ. Միքայելյանը

1970 թ. լույս բնծայեց «Ղրիմի Հայկական պապոսթոլի պատմություն (1800–1917 թթ.)» աշխատության երկրորդ գիրքը, որտեղ հեղինակը, ի շարս բազմաթիվ այլ Հարցերի, արդարացիորեն վերանայում է Գաբրիել արքեպ. Այվազովսկու գործունեությունը Հանիրավի գատապարաոզ դնահատականը և մատնանշում այն աչքառու դերը, որ նա խաղացել է Հայկական գիտությունների և գրականության, Հայ եկեղեցու պատմության մեջ:

1974 թ. լույս տեսավ Վ. Միքայելյանի «Ղրիմի հողի վրա» աշխատությունը ուսուցիչներին լեզվով, իսկ 1989 թ.՝ «Ղրիմահայոց պատմությունը»:

Ղրիմահայոց պատմությունն ուսումնասիրելիս Վ. Միքայելյանը խիստ արժեքավոր նյութեր հավաքեց ծագումով Ղրիմահայ, ուսուսական ուղղափառային նավատորմի ծովակալ Ղազար Մարկովիչ Սերբերյակովի (Ղազար Մարկոսի Արծաթագործյան) կյանքի ու գործունեության վերաբերյալ և 1979 թ. լույս ընծայեց «Օտովակալ Լ. Մ. Սերբերյակով» մենագրությունը, որտեղ հանգամանորեն լուսաբանվում է նրա սեղը և դերը ուսուսական սեփական նավատորմի, առաինյա գծի պաշտպանության և հատկապես Ղրիմի պատերազմի ընթացքում:

Գիտական լուրջ ներդրում է 2000 թ. լույս տեսած «Ղրիմահայ գաղութը Արևելք-Արևմուտք հարաբերությունների ոլորտում (13–18-րդ դդ.)» մենագրությունը, որը վերհանում է այն խոշոր և եզակի գերը, որ կատարել է Ղրիմի Հայկական գաղութը միջազգային առևտրական և այլ բնույթի հարաբերություններում:

Վ. Միքայելյանի հետապոստությունների և ուսումնասիրությունների գիտական արժեքը մեծապես բարձրացնում է աղբյուրապատկան լույս տալու հենքը: Նա քրտնաջան պրպտող է, սիրում է արխիվներում աշխատել, հավաքել հետազոտող թեմային առնչվող բազմաբնույթ վավերագրեր: Մասնավորապես Ղրիմահայ գաղութի կապակցությամբ աղբյուրագիտական խիստ կարևոր գործ է 1974 թ. հրատարակված «Հայ-խոտայական առնչություններ (ջենովական փաստաթղթերը Ղրիմահայերի մասին)» ժողովածուն:

Միանգամայն բնական է, որ այնպիսի մի լայնախոհ, հայրենասեր և բեղնավոր գիտնական, որպիսին է ակադեմիկոս Վ. Միքայելյանը, չէր կարող իր գիտական հետաքրքրությունների շրջանակից դուրս թողնել, իր պրպտուն միտքը չկենտրոնացնել ամբողջ Հայ ազգությանը հուզող հայոց պատմության դրամատիկ և առանցքային այնպիսի հարցերի վրա, ինչպես Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, Լեռնային Ղարաբաղի հայոց տեական և աննկուն պայքարը ազգային ինքնության սրահպանման և օտարակալության բռնի պարտադրված լծից ազատագրվելու և լիախորհուրդ Հայկական կյանքով ապրելու համար:

Գերմաներենի քաջիմացություն և կայգերական Գերմանիայի արտաքին գործոց նախարարության քաղաքական արխիվի ֆոնդերում կատարած սքնաջան պրպտումների արդյունքը եղավ 1995 թ. ուսուցիչներին թարգմանություններ լույս ընծայված «Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը Թուրքիայում» գերմանական փաստաթղթերի ծավալուն ժողովածուն, որը լուրջ հավելում էր մեծ հայասեր Յ. Լևիսիուսի 1919 թ. Պատազամում հրատարակած Թուրքիայում հայոց ցեղասպանության վերաբերյալ

«Deutschland und Armenien, 1914–1918. Sammlung diplomatischer Aktens-tücke» փաստաթղթերի ժողովածուն: Ողջունելի է նաև, որ ներկա տարում ՀՀ ԳԱԱ սլատմության ինստիտուտը հիշյալ ժողովածուն հրատարակեց նաև գերմաներեն լեզվով հետևյալ վերտառությամբ՝ «Die armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei (1913–1919). Dokumente aus dem politischen Archiv des deutschen auswärtigen Amts. Zusammen-gestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan»: Ավելի քան 40 մամուլանոց այդ գործի լույս ընծայումը գերմաներեն, կարծում ենք, կարևոր իրադարձություն է Հայաստանի Հանրապետության գիտական կյանքում, քանզի Համաշխարհային լայն հասարակայնության հնարավոր-ություն է ընձեռնում անմիջապես սկզբնաղբյուրներից ծանոթանալու թուրքերի ձեռնարկած և մեծագույն վայրագությունները իրագործած հայկա-կան ցեղասպանությունը: Ի միջի սյուս, սույն ժողովածուի որոշ կարևոր փաստաթղթերի հատընտիր թարգմանությունը և հրատարակությունը Հայ-երեն լեզվով վերջերս իրականացրել է ՀՀ ԳԱԱ ցեղասպանության ինստի-տուտ-թանգարանը հետևյալ խորագրով՝ «Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915–1918), ըստ կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քա-ղաքական արխիվի վավերագրերի. կազմող և առաջաբանի հեղինակ ՀՀ ԳԱԱ ակադ. Վ. Ա. Միքայելյան, Երևան, 2004»: Միաժամանակ, Վ. Միքա-յելյանը նորահայտ նյութերի հիման վրա 1980-ական թվականներից սկսած հիշյալ թեմայով մեծ քանակությամբ հոդվածներ ու նյութեր հրա-սարակեց, որոնք ծանրակշիռ ներդրում են Հայկական հարցի և հայոց ցե-ղասպանության ուսումնասիրության ասպարեզում:

Նշանակալի է ակադեմիկոս Վ. Միքայելյանի ներդրումը Լեոնային Ղարաբաղի հիմնահարցի ուսումնասիրության ու լուծման բնագավառում և՛ գիտական, և՛ սլրակտիկ առումով: Գաղտնիք չէ, որ Լեոնային Ղարա-բաղի ճակատագրի հարցը մշտապես գտնվել է հայ մտավորականության ուշադրության կենտրոնում: Այդ հարցը հատկապես սուր գրվեց 1960–1970-ական թվականներին: Այդ տարիներին ՀՀ ԳԱ սլատմության ինստի-տուտի կոլեկտիվի ժողովներում բազմիցս քննարկվել է Լեոնային Ղարա-բաղի դիմեմ ճակատագրի հարցը, սլահանջ գրվել սլայր հայրենիքի դիրկր վերադարձնելու բռնի կորզված բնիկ հայկական սլյւ հոլը: Գտնվելով այդ աղգանվեր շարժման առաջին շարքերում՝ Վ. Միքայելյանն անձամբ Պատմության ինստիտուտի կոլեկտիվի ընդունած որոշումներն ուղարկում էր ՍՄԿԿ Կենտկոմ: Միաժամանակ, ՀՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գի-տությունների» ամսագրի գլխավոր խմբագիր եղած տարիներին (1972–1987) նա, լինելով Հայաստանում առաջինը, ամսագրում լայն տեղ հատ-կացրեց աղբերի Զիյա Բունիաթովի և նրա գլխավորած աղգայնամուղական խմբի հակագիտական ու հակահայկական գործունեության մերկացմանը:

Բխստորոշ 1988 թվականի փետրվարին վերջապես սլոռթկաց արցախ-յան հուժկու հայրենասիրական շարժումը: Շարժամբ ողեչնչված Վ. Մի-քայելյանը գիտական վիթխարի գործունեություն ծավալեց արխիվների փոշիների միջից դուրս հանելու, լուսաբանելու և հանրության սեփակա-նություն դարձնելու այն բոլոր խոսուեն, բայց հարկադրական համրության

մատնված փաստաթղթերը, որոնք մերկացնում են մեծ հորջորջված տերությունների խարդախ ու եսակենտրոն քաղաքականությունը Լեոնային Ղարաբաղը մայր Հայաստանի գրկից կորցելու խնդրում: Վ. Միքայելյանը գլխավորեց Լեոնային Ղարաբաղի տխուր ճակատագրի վերաբերյալ այն ծավալուն ժողովածուի կազմման և խմբագրման աշխատանքները, որը լույս տեսավ 1992 թ. ուսերեն լեզվով՝ «Լեոնային Ղարաբաղը 1918–1923 թթ.» վերտառությունը:

Հիշյալ ժողովածուի ներածականում Վ. Միքայելյանը շեշտը հասկացնելու դնում է Մեծ Բրիտանիայի և ՌԿԿ Կովկասյան Րյուրոյի Լեոնային Ղարաբաղի հարցում որդեգրած բացահայտ հակահայկական գիրքորոշման վրա և փաստերի խոսուեն լեզվով մերկացնում է նրանց անփառունակ և լկտի դերը Լեոնային Ղարաբաղը հանիրավի հայրենյաց Հայաստանից բռնություններ անջատելու և նոր լույս աշխարհ ընկած Ադրբեջանին ընծայելու գործում: Այգ հիմնարար ժողովածուի հրատարակությունից դատ, Վ. Միքայելյանը հանգես եկավ գիտական և հրատարակատեսական բնույթի տասնյակ հոգվածներով, որոնք տպագրվել են ոչ միայն Հայաստանյան, այլև արտասահմանյան պարբերականներում: Չբավարարվելով այգքանոսի, Վ. Միքայելյանը 1990 թ. հիմնադրեց և հրատարակեց «Գոյամարտ» լրագիրը, որն իր էջերում մեծ տեղ էր հատկացնում պատմահայրենասիրական բնույթի հարցերի և Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի լուսարամաններ:

Այս ամենով հարգերձ, ակագեմիկոս Վ. Միքայելյանի ուշագրություն կենտրոնում շարունակում է մնալ նաև հայկական լայնասփյուռ գաղթաշխարհի պատմությունը: Նրա նախաձեռնություններ և խմբագրություններ հեղինակային մի մեծ կուլեկտիվ նախապատրաստել և հրատարակել է «Հայ գաղթաշխարհի պատմություն» եռահատորյակի առաջին և երկրորդ հատորները (2003): Ժամանակագրական առումով եռահատորյակը ընդգրկում է միջնադարից մինչև 1920 թ. ընկած ժամանակամիջոցը, քանզի արդի սփյուռքի ուսումնասիրությունը և նրա հիմնահարցերը բոլորովին այլ բնույթ են կրում: Հատորները կազմված են տարածաշրջանային սկզբունքով: Առաջին հատորը նվիրված է Սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի հայկական գաղութների պատմության լուսարամանը, երկրորդ հատորը՝ Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութների, իսկ երրորդը նվիրված է լինելու Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղութներին: Ակագեմիկոս Վ. Միքայելյանի նախաձեռնություններ հայ գիտական և ընթերցող լայն հասարակայնությունը հասցեագրված այս եռահատորյակը հույժողունների գործ է, որը գալիս է ամբողջացնելու հայոց համապարփակ պատմությունը:

Վերահիշյալ բազմաբեղուն գործունեությունն ակագեմիկոս Վարդգես Միքայելյանը պուգակցել է գիտակազմակերպական, գիտախմբագրական և մանկավարժական գործունեությունը: Ինչպես արդեն հիշատակեցինք, 1972–1987 թթ. նա եղել է ՀՀ ԳԱ «Լրագրեր հասարակական գիտություններին» ամսագրի գլխավոր խմբագիրը, որից հետո ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտում բաժնի վարիչ է, իսկ 1999 թ. միաժամանակ նաև «Պատմա-բանասիրական հանգեսի» գլխավոր խմբագիր: Խմբագրական գործունեությամբ

յունը նա օգտագործել է կարող գիտական ուժեր կրթելու, ճիշտ հունի մեջ գնելու համար: Նրա գործունեության մեջ նշանակալի տեղ է գրավել նաև մանկավարժական աշխատանքը հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում: Մասնավորապես, նա շուրջ երկու տասնյակ տարի հատուկ ղառնթացներ է կարգապահ Երևանի և Արմավիրի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմաաշխարհագրական ֆակուլտետում: Նա գործուն մասնակցություն է ունեցել նաև «Հայկական սովետական հանրագիտարանի» ստեղծման գործում, եղել է կազմկոմիտեի անդամ, իսկ հետագայում՝ գիտաճյուղային խորհրդի անդամ: Վ. Միքայելյանը սլարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով:

Շնորհավորելով ակադեմիկոս Վարդգես Միքայելյանին ծննդյան 80-ամյակի կապակցությամբ, ցանկանում ենք, որ նա իր տաղանդի և օժտվածության բարիքների շարունակի նորանոր բաժիններ հանել մեր հասարակայնությանը:

ՎԱԼՏԵՐ ԴԻԼՈՅԱՆ